

## Ատանայի Ողբը

Կոտորածն անգութ, հայերը թող լան,  
Անապատ դարձաւ շքեղ Ատանան.  
Կրակն ու սուրը եւ անխիղճ թալան  
Ռուբինեանց տունը ա՛խ, ըրին վերան:

Բոպէ մը չանցաւ ու հայոց խեղճեր,  
Ինկան սուրին տակ խուժանին ահեղ,  
Ժամեր ու դպրոցք բոցի մէջ կորան,  
Բիրաւոր հայեր անխնայ մեռան:

Պարապ էր աւա՛ղ, հարուստ Ատանան,  
Սոխիք էր դարձէր ամբողջ Կիլիկիան.  
Միայն ապրեցաւ Հաճընը սիրուն,  
Ինչու չի շարժիր ապառաժ Զէյթուն:

Ցերեկ ու գիշեր կրակը մեջէն,  
Թշնամուն սուրը, գնդակը դրսէն,  
Զնջեցին հայը երկրին երեսէն,  
Արին կը վազէ մեր ջինջ գետերէն:

## Ախբէրս Ու Ես

Անօրէն թուրքն է տիրել մայր հողին,  
Ինչ սրտով պիտի մտնենք անկողին,  
Մամ ջան, չտխրես, շատ չմտածես,  
Կռիւ ենք գնում ախբէրս ու ես:

Մոայլ գիշեր է, նստած ենք փոսում,  
Այստեղ հայ քաջի արին է հոսում,  
Եկել ենք կռիւ, կռում ենք այսպէս,  
Խփում ենք թուրքին, ախբէրս ու ես:

Երբ լուսաբացին թուրքն է ներս սողում,  
Մեր զիլ հարուածից աշխարհն է թնդում,  
Ինչքան պէտք լինի կը կռուենք այսպէս,  
Հայ ազգի համար, ախբէրս ու ես:

Էլ յետ դարձ չկայ, կռիւ է սաստիկ,  
Օրինանքդ տու՛ր մեզ ու մի՛ լայ, մայրիկ,

Թէ մի օր կտրի՛՛հ գոյգ արծիւ տեսնես  
Էդ մեր հոգիքն են, ախբչրս ու ես:

Մամ ջան, կը բացուեն դռները մեր գոց,  
Ոսկի կը հագնեն սեւ օրերն հայոց,  
Ու տուն կը դառնանք յաղթութեամբ էսպէս  
Ծափով, ծիծաղով, ախբչրս ու ես:

### **Աքլոր Աղբար**

Աքլոր աղբարը մեռեր է,  
Աքլոր աղբարը մեռեր է,

Ա՛լ պիտի չերգէ քոքքոտի քոքքոտա,  
Ա՛լ պիտի չերգէ քոքքոտի քոքքոտա,

Քոքքոտի քոտի քոտի քոտա,  
Քոքքոտի քոտի քոտի քոտա:

### **Աքսորի Երգեր**

Հալածուած ենք Հայաստանի լեռներէն,  
Ո՞վ չի վախնար հուրով-սուրով մեռնելէն:

Արեւին տակ մեռնիլն, Աստուած իմ, վատ է,  
Պուտ մը ջուրի մեր շրթունքը կարօտ է:

Ո՞ւր է մայրիկ, ո՞ւր է իմին հայրիկը,  
Չես գիտեր, որ վատ է թուրքին դանակը:

Ո՞ւր է մայրիկ, Ո՞ւր է անոր դիակը,  
Արցունքն իջաւ մինչեւ սրտիս յատակը:

Կոյս աղջիկներ իրարու ձեռք բռնեցին,  
Իրենք զիրենք Եփրատ գետը նետեցին:

Մոխիր դարձան այն պատուական տուները,  
Արիւններով ներկուեցան քարերը:

### **Անտառ**

Սկառուտներն են երգում,  
Մեր անտառն են արթնացնում,

Անտառ, անտառ դէ վեր կաց,  
Նայիր վերեւ ու դիմաց  
Տես քեզ սիրունացրել ենք  
Խարոյկով քեզ զարդարել ենք:

Կլոր խարոյկն է վառում,  
Մեր անտառն է արթնացնում:

Այս մեր սիրուն անտառում,  
Մի մեծ բոց է երեւում,  
Այս բոցը մեր խարոյկն է,  
Իր շուրջը սկառուտներ:

Կլոր խարոյկն է վառում,  
Մեր անտառն է արթնացնում:

Քիչ քիչ խարոյկն է հանգում,  
Հանգում ծուխ է բարձրանում,  
Մեր խարոյկը վերջանում,  
Բայց միշտ յուշերում մնում:

Կլոր խարոյկն է հանգում,  
Մեր անտառն է հանդարտում:  
Քնիր, քնիր այ անտառ,  
Արեւը քեզ կանի վառ:

Երաժշտութիւն եւ երգ՝ Սամվել Քուրչեան

## **Արդեօք Ովքե՞ր Են**

Արարատ յառաջ, Հայ զինուորներ քաջ,  
Վրէժ մեր սրտում, գնանք աննահանջ:

Արդեօք ովքե՞ր են, ի՞նչ կտրիճներ են,  
Մասիսը վկայ Հայոց քաջերն են,  
Արդեօք ովքե՞ր են, ի՞նչ կորիւններ են,  
Մասիսը վկայ ֆիդայիներն են:

Սարերէն իջան մի խումբ ձիաւոր,

Նրանց մեջն էր քաջ Սերոբն ուխտաւոր:

Արդեօք ովքե՞ր են...

Գէորգ Չաւուշն էր ջա՛Նէլ ու ջիւան,  
Ունէր մեծ անուն՝ սարերի սալան:

Արդեօք ովքե՞ր են...

Գիտեմ անունը հայոց քաջերի,  
Հրայր Դժոխքի ու Անդրանիկի:

Արդեօք ովքե՞ր են...

Դէ՛, կուենք տղերք, դէ՛, կուենք քաջ-քաջ,  
Ջարդենք թշնամուն, գնանք մենք յառաջ:

Արդեօք ովքե՞ր են...

### **Արծուիկների Երգը**

Եկ արծուիկ, ձեռք ձեռքի տանք  
Հոգով, սրտով մտերմանանք  
Գործենք բարի քայլենք յառաջ  
Կանչենք ճիշը ու քայլ առաջ:

Քայլ յառաջ դէպ միութեան նպատակներին  
Դէպ մեր քաջ ազգի յաղթանակներին:

### **Արծուիկ Թիւ 1**

Ապագայ սերունդն ենք, իրար հետ միացել ենք,  
Մեր լաւագոյն Արծուիկ Թիւ 1 խումբը ստեղծել ենք,  
Իրար հետ շատ սերով ենք ու լաւ աշխատանք պիտ տանենք,  
Սիրում ենք մենք միութիւն եւ նրանով հպարտենք:

Աշխատանքի ժամանակ իրար հետ ուրախանում,  
Արշաւներում բանակում մենք էլ միշտ մտերմանում,  
Խաղ ու մարզանքի համար բակի շուրջը վազուզում,  
Ու վերջը շատ ուրախ յուշերով ենք տուն երթում:

Պատրաստում ենք մենք, որ փոքր արենուշ լինենք,  
Բայց չենք մոռանայ, որ սրտում միշտ արծիկ ենք մենք:

## Արծիկ Թիւ 2

1, 2, 3, 4, 5, 6,

7, 8, 9, 10,

11 ու 12

Արծիկ Թիւ 2

Միշտ լաւ ենն անցկացնում բանակումներում:

Արարատի Արծիկ

Թիւ երկու միշտ պատրաստ է

Խաղ ու մարզանքի համար

Դասարան՝եր քիչ թէ շատ

Բայց լաւ յուշերում ենք երթում տուն -- տուն:

## Արենուշ Թիւ 1

Թիւ 1 Ար»նուշ,

Մեր թաշկինակն է կարմիր,

Ամենով լաւ սկաուտ,

Նպատակին կը հասնենք շուտ:

Դու մեր սերն ես Ար»նուշ 1,

Դու մեր յոյսն ես Ար»նուշ 1,

Դու մեր հաւատքն ես Ար»նուշ 1,

Խաղաղութին, ազգասճրութին, կապակցութին,

Մտերմութին, Արենուշ 1,

Այսօր մենք այստեղ ենք,

Իրար հետ շատ սերով ենք,

Այստեղ հաւաքւել ենք,

Սերը մեր մէջ կստեղծենք:

Դու մեր սերն ես...

Մենք քեզ հետ ենք միայն,

Քեզ չենք թողնի մէկ վայրկեան,

Եթէ քեզնից հեռանանք,

Կեանքը պիտի մոռանանք:

Դու մեր սերն ես...

## Արենուշ Թի 2

Թի 2 խումբ Արենուշ,  
Ամենս ուրախ աշխոյժ,  
Աշխատած՝ ենք անդադար,  
Թաղում ենք ջանքեր անչափ:

Ուրախ ենք, զարթ ենք,  
Առողջ, առոյգ, աշխոյժ ենք  
Երբ որ շատ խանդաճան ենք,  
Հա Հա Հա ծիծաղում ենք:

Երբ քանակում ենք գնում,  
Տարբեր գործեր ենք անում,  
Օրինակ մաքրութիւն անում,  
Տարբեր ճաշեր ենք եփում:

Ուրախ ենք...

Իսկ երբ որ մենք Մոզնում ենք,  
Վրանի ներսը նստում ենք,  
Տարբեր երգեր երգելով,  
Մեզի զւարճացնում ենք:

Ուրախ ենք, ուրախ ենք,  
Զւարթ ենք, զւարթ ենք,  
Առողջ, առոյգ, աշխոյժ ենք,  
Թրա լալալալալա...

## Արենուշ Թի 3

Թի 3 Արենուշ, դու մեր սիրելի խումբը  
Միշտ պատրաստ ու աշխոյժ մեզ համար,  
Ձեռք ձեռքի տուել ենք, թի 3 ստեղծել ենք,  
Տանում ենք լաւագոյն աշխատանք:

Օգնել են մեզի մեր սիրելի գերագոյն,  
Ոտքի են կանգնացրել մեր խոճմբը,

Դաշտերում, ձորերում, բանակում, արշաւում,  
Մեզ էլ միշտ կանչել են թիւ 3:

Առաջ մենք հատուած ենք ու յետոյ Արենուշ  
Երեք խմբերի բաժանուած  
Առաջին թիւ մէկը, ու յետոյ թիւ երկուսը,  
Ու երրորդ սիրելի թիւ 3:

Օգնել են...

#### **Արենուշ Թիւ 4**

Ամառ ու շոգը եկել է կրկին  
Եկել ենք մասնակցել մենք բանակումին  
Արենուշների թիւ 4-ի խումբն ենք  
Բոլորս գերագանց ժիր ու աշխոյժ ենք:

Մարզադաշտում ենք աշխատանք տանում  
Քոնսէ ու թուփ-հալաբի ենք խաղում  
Տանում ենք տարւում՝ բայց միշտ ուրախ ենք  
Խմբապետի խօսքը մենք միշտ լսում ենք:

Պահակ պահակ, պահակ մի ասա  
Պահակ կանգնելը երազ խառնողա  
Թէկուզ պահակ կանգնել մենք չենք սիրում  
Խմբապետի ասելով միշտ պատրաստ կանգնում:

#### **Արենուշ Թիւ 5**

Արենուշ թիւ 5, աշխատանք քրտինք  
Թող մեր ճիշը հասնի մինչեւ երկինք  
Արենուշ ենք մենք, վեհ ու փառաւոր  
Սկաւուտ ենք անկեղծ, Հայուհի զինւոր:

Յառաջում, քայլում դէպի յաղթանակ,  
Պարծանքով հնչենք, մենք ենք Հայ զաւակ  
Հետեւենք, սովորենք եւ միշտ պահպանենք,  
Ազգի անհրոժիւն եւ մեր դաւանանք:

Արենուշ ենք մենք եւ պիտի մնանք,  
Հ.Մ.Ը.Մ.-ի ջահը միշտ վառ պահելով,

Արենուշ ենք մենք եւ պիտ շատանանք,  
Թիւ 5 դրօշակը բարձր պահելով:

## Արիւնտ Դրօշ

Արիւնտ դրօշ վեհ դաշնակցութեան,  
Ծածանեց ընդ՝ չմ բոնակալութեան,  
Յոյսով լեցուեցաւ սիրտը հայութեան,  
Երկիւղը պատեց կայսեր օսմանեան:

Մեծ մարդասպանը սաստիկ զայրացաւ,  
Հայեր ջնջելու հրաման տուաւ,  
Քանդել Հայաստան, ջնջել Հայ անուն,  
Որ չխանգարուի իր ազատութիւն:

Բայց զենքը ձեռին՝ ոտքի կանգնեցան  
Ջան ֆՇդայիներ, առիծի նման,  
Կռիւ կը մղչր հերոս Անդրանիկ,  
Սարսափը տիրեց օսմանեան զօրքին:

Արի՛ք Հայկազունք, գոչենք միաձայն,  
Սրտագին գոչենք - կեցցե՛ Հայաստան,  
Կեցցե՛ Հայաստան եւ ազատութիւն,  
Հայրենեաց պաշտպան վեհ Դաշնակցութիւն:  
Դաշնակցութիւնը յաղթեց սուլթանին,  
Նո՛ր արեւ, նո՛ր կեանք պարգեւեց հայՇն:

Չմնանք հայե՛ր, օտար լուծին տակ,  
Հերիք է հայուն այսքան համբերել,  
Թո՛ղ չծաղրէ մեզ անգութ թշնամին,  
Մինչեւ որ հասնինք մեր նպատակին,  
Միրենք միութիւն, չանենք վատութիւն,  
Մի՛ շտ բարձր պահենք Հ.Յ.Դ. անուն:

## Արի Թիւ 1

Արի թիւ 1, Արի թիւ 1,  
Միութեան յոյսն ենք թիւ 1,  
Արի թիւ 1, Արի թիւ 1,  
Միութեան աստղն ենք թիւ 1,



Միրում ենք բանակում,  
Այս երազն է մեր անքուն,  
Միրում ենք միութիւն  
Թոկ, գերան չարքաշութիւն:

Քայլենք դէպի հաւատքը վեր,  
Քայլենք յառաջ ազգի քաջեր,  
Մենք ենք պատրաստ օգնութեան,  
Եւ կը պաշտպանենք ազգութեան:

Մեզ լսէք ընկերներ,  
Արծւիկ, Գայլիկ, Արեւուշներ,  
Կանք պիտի լինենք  
Արի Թիւ 1 անվեհեր:

## **Արի Թիւ 2**

Մենք մի խումբ կազմած Արիներ,  
Մի խումբ կազմած սկաուտ,  
Միրում ենք միայն Արի Թիւ 2,

Սա մեր նպատակն է յաւերժ,  
Որ պահենք՝  
Պահենք միութիւն.  
Սա մեր նպատակն է յաւերժ,  
Որ պահենք՝  
Պահենք հայութիւն:

## **Արի Թիւ 3**

Նորէն Կիրակի եկաւ,  
Աշխատանքի օր հասաւ  
Թիւ 3-ի, դրօշակը,  
Դաշտ ու ձորում ծածանաւ:

Բոլոր տարին աշխատում  
Չարքաշ քրտինք ենք թափում  
Մեր սրտները միացրած  
Երրորդ կարգ ենք սովորում  
Ուրիշներին ենք օգնում:

Արի Թիւ 3

Դու ես մեր իտեալը  
Միութիւնն է մեր տունը  
Մեր երազն ու մեր քունը

Արի Թիւ 3

Դու ես մեր իտեալը  
Քեզ ենք սիրում մենք միայն  
Հաւատարիմ, յաւիտեան...

Արի 3, Արի 3

Դուք պատանիներ  
Մեզ միացէք  
Մեզ հետ երգէք  
Դէպ լաւ աշխատէք  
Դժարին հետ  
Ընդմիջտ պայքարէք:

**Արի Թիւ 4**

Մեր թիւ 4-ի ութ ամին  
Անցել է շատ հաճելի  
Ջանքերը որ թափել են  
Ղեկավարներն այս ճամբին:

Ալէ-ալէ, ալէ-ալէ  
Ալէ-ալէ է՛ է՛  
Ալէ-ալէ է՛ է՛  
1, 2, 3, 4. թիւ 4:

Այժմ մենք ուղեւորուած  
Նպատակին ենք հասած  
Աշխատում ենք յաւիտեան  
Սլանալ յաւերժ դէպ յառաջ:

Ալէ-ալէ...

Մեր բոլորի սրտերում  
Այս լոյսն է շողշողում  
Հասնի գագաթնակէտին  
Թիւ 4-ը վաղ ապագայում

Ալէ-ալէ...

## Արի Թի 5

Արի ենք չարքաշ, անդրանիկ Արի,  
Թի 5-ն է զօրաւոր նման մէկ քարի:  
Սիրում ենք ու աշխատում ազգին ծառայում,  
Որ ունենանք պատիւը, կոչւելու Արի:

Արարատեան դաշտի լանջի վրայ,  
Երագում ենք տեսնել գոյները նրա:  
Կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն,  
Թող անվերջ ծածանի եռագոյն:

Եթէ որ լինի օրերից մի օր,  
Բաժանւենք, հեռանանք  
Ուրիշ տեղ գնանք:

Եթէ որ լինի օրերից մի օր,  
Նոյնիսկ էլ իրարՇց,  
Լուր չունենանք:

Մենք միշտ կը մնանք հաւատարիմ,  
Եռագոյնին, Թի 5-ին, Հ.Մ.Ը.Մ.-ին:

## ԱրմենՇան Հող Ա

Երբ որ կործանւեց չքնաղ Մեր Անին  
Ենթարկւեցինք մենք օտարի լծին  
Կորել էր հովիւը, փռւել էր հօտը  
Թուրքին էր մնացել հայոց արօտը:

ԱրմենՇան հող ա, երկիրը ծով ա  
Սասուն, Մուշն ու Վանը հայկական հող ա:

Եղիբ դու ամէն տեղ, որտեղ մի հայ կայ  
Գուրգուրիբ դու նրան, Հայաստան թող գայ:

ԱրմենՇան հող ա...

Դժար է, դժար, ով երկիր ձգեակ

Որ հայը մնայ օտարի լծի տակ:

ԱրմենՇան հող ա...

### **Ասպետական Մեւ Սատանան**

Ասպետական, սեւ սատանան,  
Կուզէ առնել մեր Կիլիկիան  
Մեր Կիլիկիան զէնքով առին,  
Ուզեն չուզեն ետ պիտի տան:

Եօթը թիթեղ դեղին ոսկի,  
âենք հաւատար թուրքի խօսքին,  
Ան որ կըսէ վախկոտ է հայը,  
Անոր պիտի տանք բերնին համը:

Հրաման տւէք, որ կատարենք,  
Թուրքին բռնենք, ոտքէն կախենք.  
Յետոյ տանենք շուկան ծախենք,  
Մարտիկներուն փամփուշտ գնենք:

Մենք Հայերս ենք պատուական,  
Քաջեր ունենք Դաշնակցական.  
Ֆիդայիներ մեզի պաշտպան,  
Թերօրիստներ ձեզի դուրբան:  
Թեհլիրեաններ մեզի պաշտպան,  
Թերօրիստներ ձեզի դուրբան:

### **Աշխարհի Ցաւով**

Սիրտս կ'արիւնի աշխարհի ցաւով,  
Որքա՛ն տառապանք, Աստուած իմ, չորս դիս.  
Կեանքի դաշտերէն փչող ամէն հով  
Հառաչ ու կսկիծ կը զարնէ դէմքիս:

Անմեղ զոհերու արիւնով եռուն  
Հողը ոտքիս տակ կը մնայ միշտ թաց,  
Եւ նոր ոճիրներ, իմ շուրջն ու հեռուն,  
Աշխատաւորին քրտինքով օծուն:

Ես ինչպէս նստիմ խնճոյքի սեղան

Եւ ըմպեմ ուրախ վայելքի գինին  
Երբ որ կը խլեն մարդիկ անվարան  
Որքի բերանէն պատառը հացի...

Աստուած իմ, որքան անարդար վճիռ.  
Ինչպէս կարող եմ քար դնել խղճիս...  
Կեանքեր թեւաբեկ եւ թշուառակիր.  
Աշխարհի ցաւով հիւանդ է հոգիս:

### **Պատերազմ էք գնում**

Պատերազմ էք գնում, բարով գնացէք.  
Քաջերի արիւնն է ձեր մէջ, իմացէ՛ք.  
Մեր նոր կազմաւորուող հայոց բանակի,  
Առաջին զինուորն էք, բարով գնացէ՛ք:

Որքան էլ որ դժուար լինի, դիմացէ՛ք.  
Վախկոտն ան»ն օր է մեռնում, իմացէ՛ք.  
Քաջերը մ»ն ԱՅԻՅՎՎ փառքով, իմացէ՛ք,  
Հողը արիւնով են փրկում, իմացէ՛ք:

Քաջերի կորուստով, ցաւել ենք դարեր.  
Հողերի կորուստով՝ հազար ամեակներ.  
Այժմ շատ են պէտք մեզ յաղթանակներ  
Դեպ փառք ու յաղթանակ, բարով գնացէ՛ք:

Որքան էլ որ...

Դուք մեր նախնեաց հողը նորից յետ բերէք.  
Մեր Հայկազեան փառքը նորից յետ բերէք.  
Մուշն ու Մասուն, Արարատը յետ բերէք.  
Դեպ Արցախ, Մուսա լեռ, բարով գնացէ՛ք:

Որքան էլ որ...

### **Բախտիս Աստղիկը**

Մէկ գիշեր նստած իմ երկինքն իմ նայում,  
Իմ բախտիս աստղիկը երկնքում իմ նայում,  
Ինչքան երկնքում աստղերը փնտրամ,  
Բայց իմ բախտիս աստղիկը երկնքում չգտամ:

Չեմ ուզի, չէ չեմ ուզի,  
Իմ բախտիս աստղիկը կորի:

Մէկ գիշեր նստած իմ երկինքն իմ նայում,  
Նստած իմ երկնքի աստղերն իմ հաշւում,  
Ինչքան հաշւում իմ աստղերը չեն վերջանում,  
Այսքան աստղերը իմ ցաւերիս մոմռում:

Չեմ ուզի, չէ չեմ ուզի,  
Իմ բախտիս աստղիկը կորի,  
Չեմ ուզի, չէ չեմ ուզի,  
Ցաւից աչքերս արցունք լցի:

Մի գուցէ բախտիս աստղիկը լինի լուսին,  
Որ լոյս տալիս բոլոր աշխարհքին,  
Եթէ ես լինեմ աշխարհում չքաւոր,  
Բայց իմ բախտիս աստղով բախտաւոր եմ, բախտաւոր:

Չեմ ուզի, չէ չեմ ուզի,  
Իմ բախտիս աստղիկը կորի,  
Չեմ ուզի, չէ չեմ ուզի,  
Իմ լուսինս ամպերում կորի:

### **Բանակում**

Ամեն տարի բանակում, բանակում,  
Ցեխոտ ջուր ենք մենք խմում,  
Ցեխ փլաւով ենք մենք սնում,  
Մեւ դազան ենք լւանում:  
Ցեխոտ ջուրը սէր է բաշխում,  
Ցեխ փլաւը փոր կշտացնում,  
Մեւ դազանը ձեռք սեւացնում,  
Բայց մեզի մտերմացնում:

Ամեն տարի բանակում, բանակում,  
Նոյն շարքերն ենք մենք միշտ կազմում,  
Նոյն դասարանները նստում,  
Նոյն խաղերն ենք կրկնում:  
Շարքերը մեզ դաստիարակում,  
Դասարանները մեզ կրթում,

Խաղերը մեզ ուրախացնում,  
Եւ իրար շուրջ է պահում:

Մենք կը գնանք բանակում,  
Որովհետեւ իրար շատ ենք սիրում,  
Իրար մօտ ենք զւարճանում,  
Մեր ցաւերն են մէկ դառնում:  
Բանակումը մեզ հաւաքում,  
Մեր սերը յաւերժ է պահում,  
Կարօտով ենք մենք միշտ յիշում,  
Որ ապրել ենք մէկ տեղում:

### **Բանակումի Քայլերգ**

Յառաջ Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտներ  
Յառաջ, յառաջ բանակումի  
Հոն կ'սպասեն մեզ քոյր ու եղբայրներ  
Յառաջ, յառաջ եւ միշտ յառաջ:

Ով բանակում դու ես մեր իտեալը  
Ով բանակում ինչ անուշ անուն:

Հեռու վայրերէ մենք կը հաւաքուինք  
Ամառ ձմեռ մենք քուն չունինք  
Գիշեր ցերեկ անքուն կ'աշխատինք  
Բանակումի կը պատրաստուինք:

Ով բանակում...

### **Դրոյի Երգը**

Հայոց երկնքով անցէ՛ք հաւքեր իմ սիրուն,  
Քաջ հայդուկից բարեւ տարէ՛ք դէպի տուն,  
Մեւ արծուի պէս մոլոր օտար ափերուն,  
Դրօն հողին կարօտ մտաւ յաւերժ քուն:

Արի դու քաջ Դրօ բազկիդ ուժը վեհ,  
Հեծի՛ր քո ճերմակ ձին քշի՛ր սարն ի վեր  
Ձայն տուր քո քաջերին քնած թէ արթուն,  
Փրկիր քո հայրենիք չքնաղ Սուրմալուն:

Շատ դահիճներ են ընկել բազկիդ հարուածից,  
Չես վհատուել անգամ կրծքիդ խոր վերքից,  
Անվերջ զրկանք ես կրել քո կամքով արի  
Դու քաջ զինուոր ազգի ու գաղափարի:

Արի դաշնակ Դրօ բազկիդ ուժը վեհ...

Դաշնակցականի վայել աննկուն կամքով  
Պայքարել ես, ապրել ազգի կարօտով,  
Կարսն ու Վանը Սուրմալուն, Պիթլիս յիշելով  
Փակուել են աչքերդ յաւիտեան քնով:

Արի դաշնակ Դրօ բազկիդ ուժը վեհ...

### **Ձայն Տուր Ով Ֆետա**

Ձայն տուր, ո՛վ Ֆետա, ինչու ես տրտում,  
Լուռ ու մունջ նստած, երկար մտածում,  
Աւաղ, երկար մտածում  
Տխուր, երկար մտածում

Շարժեցէք տղերք սուրեր շողշողուն,  
Թափեցէք կրակ թշնամեաց գլխուն,  
Գազան թշնամեաց գլխուն,  
Դաժան թշնամեաց գլխուն:

Թափենք մեր արիւն իբրեւ ախոյ»ան,  
Լինի առաջնորդ մեր ազատութեան:  
Սիրուն մեր ազատութեան,  
Անուշ մեր ազատութեան:

Պարզեցէք դրօշ վեհ Դաշնակցութեան,  
Լինի առաջնորդ մեր ազատութեան:  
Սիրուն մեր ազատութեան,  
Անուշ մեր ազատութեան:

Քանի այսպէս է Հայր խղճալի,  
Զինւած պիտ լինի ամբողջ Ֆետայի,  
Սիրուն ամբողջ Ֆետայի,  
Անուշ ամբողջ Ֆետայի:



## **Իմ Փոքրիկ Ժամանակ**

Ես իմ փոքրիկ ժամանակ,  
Ունեի շատ նպատակ,  
Որ ամ»նը դրամ ոտքիս տակ:  
Ուզում էի հարուստ լինել  
Փողերի մեջ խեղդել,  
Տուն ու մեքենայով ապրել:

Քիչ քիչ ես մեծացայ,  
Ճիշտությւնին մօտեցայ, հասկացայ,  
Կ'ապրեմ ես այս աշխարհ  
Ոչ թէ միայն փողի համար  
Միայն թէ ազգիս համար  
Կը լինեմ օգտակար

Ես մի աղջիկ տեսայ  
Նրա վրայ սիրահարեցայ  
Ուզացի իր հետ ճանապարհ գնալ  
Ասամ քեզ սիրում եմ,  
Ասաւ գնայ ժամանակ չունեմ,  
Միայն թէ հարուստի կ'ուզեմ:

Քիչ քիչ ես...

## **Իմ Հեռաւոր Հայրենիք**

Իմ հեռաւոր հայրենիք,  
Իմ փառաւոր հայրենիք,  
Աշխարհներու աննման  
Իմ անուշիկ Հայաստան:

Ահա Մասիսն ու Միփան  
Ամպերու մէջ Կերեւան,  
Մէջքիդ Արաքսն է կամար,  
Կրծքիդ Սեւանն երկնաքար:

## **Իմ Սեւան**

Լուսինը վրադ տխրում,  
Արեւի շողը փայլում,

Տեսնողը արտասուում է,  
Քեզնով նա հիանում է,  
Իմ Մեւան, սիրուն Մեւան:

Իշխան ձուկը գերի դարձած,  
ձար ձեռքի խաղը անցած,  
Բերդիդ մեջ զինուոր կանգնած,  
Ապագայից յոյսը կտրած,  
Իմ Մեւան...

Անունդ անմահացած,  
Երազներին արցունք դարձած,  
Բայց աւաղ քեզ ժամ չի հասել,  
Որ ավերիդ ծաղիկ ցանեն,  
Ալիքներիդ թաւիշ փռեն,  
Իմ Մեւան...

Կգա մի օր, որ քեզ կգովեն,  
Զուլալ ջրիդ կենացը կը խմեն,  
Թէ յոյսով ուշ չլինի,  
Զուլալ ջուրդ փուշ չլինի:  
Իմ Մեւան...

### **Էս Ի՞նչ Ցաւ Էր**

Էս ի՞նչ ցաւ էր վայ աման  
Պատեց ամբողջ Հայաստան.  
Թուրքին մնաց Մուշն ու Վան,  
Ալաշկերտն ու Արտահան:

Դեհ տղերք ջան գարկ տուէ՛ք,  
Դուշմանին լաւ ջարդ տուէ՛ք,  
Թող շուն թուրքը իմանայ  
Հայը միշտ քաջ կը մնայ:

Քաջ Արաբօն ու Սերոբ,  
Քեռի, Սմբատ, սուրբ Յակոբ,  
Կոի կընեն անվեհեր,  
Թուրք օսմանցին կը դողեր:

Դեհ տղերք ջան...

Քաջ Անդրանիկ քեզ դուրբան,  
Դուն ես փրկիչ պահապան.  
Մահը մերն է մենք նրան,  
Կեցցե՛ անուշ Հայաստան:

Դեհ տղչրք ջան...

### **Գարեգին Նժդեհի Յիշատակին**

Գիշեր ու ցերեկ էլ տուն քուն չունենք,  
Ու Էրզի մեջ մենք կռիւներ կրնենք.  
Վայրենի քիրտերուն բոցով վառեցիր,  
Քու ահով թուրքերուն երդիք փակեցիր:

Էլի դու մեր քաջ Նժդեհ, Նժդեհ դիւցազուն,  
Էլի քո կամքովդ վեհ օգնէ հայերուն.  
Սասուն կարօտել է ձիուդ ոտներուն,  
Մշոյ դաշներուն բերիս վառ գարուն:

Գաւառ չմնաց դու չարշաւեցիր,  
Անթիւ անհամար թուրք կոտորեցիր:  
Մարտօն ու Վարդան Խնուս թողեցիր,  
Մէկ էլ քաջերին դու քո հետ վերցրիր.

Էլի դու մեր...

Չերոս ծնուեցիր, անվախ կռուեցիր,  
Անյաղթ մնացիր, հերոս զոհուեցիր.  
Սստուած կը կանչիմ Նժդեհ, Նժդեհ Գարեգին  
Առնիս յարութիւն, օգնիս հայերուն:

Էլի դու մեր...

### **Կարնայ Շարժում**

Չայն մը հնչեց Էրզրումի Հայոց լեռներէն,  
Թունդ-թունդ ելան Հայոց սրտեր զէնքի շաչիւնէն:  
Հայ գիւղացին դարուց ի վեր սուր զէնք չէ տեսած,  
Դաշտը թողուց, սուր, հրացան բահի տեղն առաւ:

Քնքուշ կեանքը ծանր է թուում հայ օրիորդին,  
Զենքը ձեռին յողորում է Հայոց քաջերին:  
Հայ տիկիներ ստիպում է ամուսնուն գնալ,  
Պատերազմի դաշտի վրայ վերք տալ, ստանալ:

Հայ ծերուկը ցուպը ձեռին լալով խնդրում է,  
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ:  
Անմիութիւն տունը քանդող Հայոց խեղճ ազգին,  
Հրաժարեցաւ, տեղի տուաւ միութեան ձայնին:

Լսեց թուրքը ու սառեցաւ արիւնը վատին,  
Զեր երազել Հային տեսնել նա այդ վիճակին:  
Եւրոպային լուրը հասաւ շարժման հայ գեղջուկին,  
Ուրախական ողջոյն տուաւ հայրենասէրին:

Ցնծա՛, մայր մեր, ով Հայաստան, որդիքդ միացան,  
Ութ դարերում սուգ ու թախիծ քեզնից վերացան:  
Ուսումն ու լոյս ազատութեան արդ քեզ են ընկեր,  
Սուր, հրացան, եռանդ ռազմի պաշտպան անվեհեր:

Ուրախացաւ մայր Հայաստան, ելաւ կանգնեցաւ,  
Հին դարերու սուգ, տառապանք մի քիչ մեղմացաւ:

### **Կարօտի Յիշատակին**

Մռով լերան լանջին սեւ ամպեր պատեց,  
Արցախ գաւառ իւր որդիներին կանչեց,  
Նրանց թուում գնաց կռուի դաշտ արնոտ,  
Դաշնակցական խենթն էր անունը Կարօտ:

Յիշէք հայեր չմոռանաք ձեր քաջաց անուն,  
Նրանց հոգին միշտ ձեր հետ է դժուար պայքարում.  
Մեծ Չաւուշի դու հետնորդն ես անվախ Տարսնցի,  
Մենք քեզ երբեք չենք մոռանայ շուտ վերադարձիր:

Թշնամին մեր գաւառները պաշարեց,  
Հայդուկների զարկից գետին գլորուեց.  
Գազան թուրք մեր սրտերն արել ես »արոտ,  
Քո դէմն է դուրս ելել ֆիդայի Կարօ՛Յ:

Յիշէք հայեր...

Անփառունակ հայեր մեր հայրենիքում,  
Անթիւ գոհուածների արիւնն է կանչում.  
Մեր քրտինքով շինուած կիսավեր գիւղում,  
Անվախ հայդուկ Կարօտ վրէժ է գոռում:

Յիշէք հայեր...

Քաջիդ համբաւ շատ երկիրներ տարածուեց,  
Համայն հայութիւնը քեզի ճանաչեց.  
Դու Արցախ լեռների կորիւնն ես Կարօտ,  
Ռազմի դաշտից փախսան թուրքերն անամօթ:

Յիշէք հայեր...

### **Գարուն է Ժպտում**

Շոգ ամռան բոյրն առել ես,  
Շող աշխարհ բոյրն առել ես,  
Շէկ գարնան հետ շողում ես, իմ աշխարհ:

Մեզ համար դու միակն ես,  
Մեր հոգու արեգակն ես,  
Մեր սրտի վառ երազն անմահ:

Դու հայոց մեր վրանն ես,  
Մեր իսաղաղ օրօրանն ես,  
Մեր կեանքի դու կապոյտ կամար:  
Արարատեան դաշտի շէկ վազն է մեզ ժպտում,  
Երկնքի լոյսն էլ է մեզ գրկում,  
Հայրենական հողի նոր երգն է մեր սրտում,  
Դառնում կեանքի երջանկութիւն:

Մեր կեանքի յոյս յարատեւ,  
Մեր հոգու լոյս յարատեւ,  
Մեր Մասիս սչգ սարի դէմ մենք կանգուն,

Արեւի պէս անմար ենք,  
Դարերի պէս անմահ ենք,  
Մեր հպարտ մեր նոր երկրում:

Դու հայոց մեր վրանն ես...

### **Գետաշէն**

Բա՛ւմել ես լեռներին, ունես հազար շէն,  
Արծիւների բոյն ես, չքնաղ Գետաշէն,  
Բարբարոս ցեղերին անդադար սանձող,  
Դու քաջերի օրրան, իմ քաջ Գետաշէն:

Չորս կողմդ անդունդ է, ճամբէքդ փակւած,  
Երկնքում սեւ ու մութ ամպեր կուտակւած,  
Կողքիդ հայկական շէն»րն են լքւած  
Դու կաս ու կը մնաս, յաւերժ Գետաշէն:

Ջահլ տղչոք դու քիչ ունես Գետաշէն,  
Բայց ծերերդ էլ ոչ մի բանով պակաս չէն,  
Ամ»ն մի կին մի ֆիդայի տնաշէն,  
Քեզ յաղթել չի լինի իմ քաջ Գետաշէն:

Չորս կողմդ անդունդ է...

Դու պիտի դիմանաս ու կանգուն մնաս,  
Հակառակ թշնամուն պիտի շէնանաս,  
Մայր Հայաստանին պիտի միանաս,  
Արցախի դարպասն ես ամրոց գետաշէն:

Չորս կողմդ անդունդ է...

### **Կեղրոնից Առնենք Հրաման**

Կեղրոնից Առնենք հրաման,  
Կուելով մտնենք Հայաստան,  
Հայու զինուոր հոգուդ դուրպան,  
Թող թուրքերը քեզնից դողան:

Խումբերը դէպի Հայաստան,  
Առնենք սուր եւ հրացան,  
Երթանք մեր Մայր Հայաստան,  
Հերոսների օգնութեան:

Խումբերը մտան Էրզրում,

Սարսափը տիրեց թուրքերուն,  
Գացէք ըսէք սուլթաններուն,  
Որ Հայաստան յանձնեն հայուն:

Խումբերը դէպի Հայաստան...

Երզնկայէն մինչեւ Կարին,  
Մաքրեցին թուրք ցեղերին,  
Մէկն էր Մուրատ Սեբաստացին,  
Միւսն էր Շապին - Գարահիսարցին:

Խումբերը դէպի Հայաստան...

### **Գէորգ Չաւուշին**

Սուլուխէն ստացանք լուրեր ահաւոր,  
Հայոց արծին ընկաւ կրծքէն վիրաւոր,  
Կանաչ դաշտի միջին ականդեց հոգին,  
Մեր սրտերում մնաց յաւերժ թանկագին:

Էլի՛ Գէորգ, էլի՛, դուշմանը շատ է.  
Հայոց ազգի համար մեռնիլը փառք է:

Կտրիճ Գէորգ Չաւուշ դամբանէն վեր կաց.  
Մշոյ սէգ սարերէն իջիր ցած,  
Տարօնի քաջերն են մենակ մնացել,  
Ազատութեան սիրոյն կռիւ են բացել:

Էլի՛ Գէորգ, էլի՛ ...

Հայոց կտրիճների ճամբըքը փուշ է,  
Վեր կաց Գէորգ վեր կաց, արդէն շատ ուշ է,  
Կազմենք նոր նոր խումբեր գնանք Մուշ Սասուն,  
Թշնամու զօրքի մէջ գցինք վայնասուն:

Էլի՛ Գէորգ, էլի՛ ...

### **Ղարաբաղ**

Դարձեալ սեւ ազգը դաժան, անմարդկային ու գազան,  
Միրուն Ղարաբաղը մեր ուզեց գրաւել, սակայն

Ինչ կրնան ծնիլ ժայռերն, հպարտ կանգուն լեռներէն  
Տակաւին չիմացան շատերն ազերիներէն,

Ղարաբաղ, միշտ կանգուն մնաս.  
Ղարաբաղ, պարծանք հայութեան:  
Ղարաբաղ, դու յաւերժ մնաս.  
Ղարաբաղ, սիրտն ես հայութեան:

Ղարաբաղի սուրբ մայրեր ձեզմէ ծնան հայ քաջեր,  
Ու կեանքերնին զոհելով գրաւեցին մեր սրտեր,  
Ձեզմէ հեռու ենք, սակայն մենք չենք մնար անտարբեր,  
Դուք մեր սրտերուն մէջ էք, խոնարհութիւն ձեզ քաջեր:

Ղարաբաղ, միշտ կանգուն մնաս...

### **Ղարաբաղցին**

Պատուել գիտի միշտ իր հիւրին,  
Գիտէ գինը աղ ու հացին,  
Միշտ հիւրասէր ու միշտ բարի,  
Միշտ սրտաբաց Ղարաբաղցին:

Ղարաբաղցին, Ղարաբաղցին, Ղարաբաղցին,  
Ուր լինես իմ բարեկամ,  
Դու նրա հետ ընկերացիր,  
Վատ ընկերոջ համար անգամ,  
Կեանքը կը տայ Ղարաբաղցին:

Կռոււմ լինի, աշխատանքում՝  
Խիզախում է ինչպէս արծիւ,  
Վաստակն արդար, խիղճը մաքուր,  
Արդարադատ Ղարաբաղցին:

Ղարաբաղցին...

Մշակ է նա ու շինարար,  
Բայց հասարակ մարդ մի կարծիր,  
Գիտնական է ու զօրաւար,  
Բազմավաստակ Ղարաբաղցին:

Ղարաբաղցին...



## Ղարաբաղի Ընկաճներին

Լերան լանջին խոր նիրհում են ֆետայիներ յաւիտեան,  
Ազատ քնել միշտ սիրում են զաւակները բնութեան,  
Եկէ՛ք, գնանք հայ աղջիկներ հասնինք այնտեղ Սիմ լերան,  
Ազգին պաշտպան ֆետայիներ մեզի համար քուն մտան:

Հասնինք քաջաց սուրբ գերեզման, թափենք արցունք աչքերնիս,  
Մեր հայրենեաց հողին պաշտպան զարկուեցան քաջերնիս,  
Ահա հասանք հայ օրիորդներ երգենք, մեղմիկ միասին,  
Ցանենք ծաղիկ, թափենք արցունք յարգանք նրանց սուրբ շիրիմին:

Հիւսենք պսակ նրանց գլխին վարդ, մանիշակ, մեխակից,  
Երդուենք նրանց յիշատակին չվախենալ տաճիկից,  
Մեզի համար գոհ գնացին Դաշնակցութեան վեհ քաջեր,  
Որ ննջում են լերան լանջին ազատութեան փրկիչներ...

## Կեանքի Երգը

Բաժակները պահել գլխից վ»ր,  
Մեր հողի սուրբ կենացն ենք խմում,  
Մեր հողի կենացը ընկերներ,  
Միշտ ծաղկուն թող լինի աշխարհում:

Բարի բերք մաղթենք մեր հողին,  
Մեր հողի ոսկե խաղողին,  
Խաղողից գինի քամողին,  
Մեր հողերն ազատ պահողին:

Բաժակները պահել սրտի մօտ,  
Ժողովուրդ քո կենացն ենք խմում,  
Դարձաւ քո գիշերը առաւօտ,  
Քո անունը յաւերժ աշխարհում:

Բարի բերք մաղթենք...

## Կիլիկիա

Երբոր բացւին դռներն յուսոյ  
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,

Չքնաղ երկրին մեր Արմենիոյ  
Երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր,  
Երբ որ ծիծառն իր բոյն դառնայ,  
Երբ որ ծառերն հագնին տերեւ՝  
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,  
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերն Սուրիոյ,  
Լեառն Լիբանան եւ իւր մայրեր,  
Տեսի գերկիրն Բտալիոյ,  
Վենետիկ եւ իւր կոնտոլներ,  
Կղզի նման չիք մեր Կիպրեայ,  
Եւ ոչ մէկ վայրն է արդարեւ  
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,  
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,  
Ուր ամենայն իդձ կ'աւարտի.  
Հասակ մը ուր հոգին Բ տենչ՝  
Յիշատակաց իւր կարօտի.  
Յորժամ քնարն իմ ցրտանայ,  
Սիրոյն տալով վերջին բարեւ  
Երձամ ննջել 1/2իմ Կիլիկիա,  
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

## Գինի Լի'ց

Աշխարհ սարսափ հայու ահը  
Գետին ընկավ թուրքին գահը  
Պատմեմ ձեզ Թալեաթին մահը, Գինի լի'ց  
Ընկեր ջան, գինի լի'ց Խմողաց անուշ, անուշ.

Դաշնակցութիւն ժողով արեց  
Շուն Թալեաթին մահ որոշեց  
Թեհլիրեանին բախտը բացւեց, Գինի լի'ց...

Թալեաթ փաշան փախաւ Պերլին  
Թեհլիրեանը հասաւ ետին  
Զարկաւ ճակտին փռեց գետին, Գինի լի'ց...

Թալեաթ փաշին դրին հողը

Լուրը տարին ցնդած մօրը  
Կեցցե՛ Դաշնակ կամաւորը, Գինի լի՛ց...

Դու կը խմես իմ կենացը  
Ես կը խմեմ քու կենացը  
Բոլորս ալ կը խմենք Դաշնակցութեան կենացը, Գինի լի՛ց...

Յիշատակ<sup>1</sup> միշտ փառաւոր  
Շիրիմդ լոյս Քրիստափոր, Մայիս 28 շնորհաւոր, Գինի լի՛ց...

### **Գայլիկների Երգը**

Մեր միութեան գայլիկները  
Հայ սերունդի հատիկները,  
Ոտքի կանգնած ու միշտ պատրաստ,  
Մեր հատուածի պարծանքները:

Հ.Մ.Ը.Մ. մեզ սիրիր,  
Հ.Մ.Ը.Մ. մեզ պահիր,  
Քեզ կը սիրենք յաւիտեան  
Քեզի կ'ուզենք մենք միայն:

### **Յառաջ Նահատակ**

Յառաջ նահատակ ցեղի անմահներ,  
Վեց դարու անմոռ վրէժի զրահներ.  
Կատարն հայրենի լեռանց հեռագոյն՝  
Երթանք կոթողել դրօշակն եռագոյն:

Հսկայ նուիրման  
Տորմիդ հրրաթել  
Կամաւոր բանակ,  
Մ<sup>3</sup>Ե<sup>3</sup>Շ Յառաջ անսասան,  
Յառաջ անդէդել,  
Դեպի յաղթանակ:

Վատին սեւ արին մեր հողն ոռոգեց,  
Տարագիր Հայն իր կեանքը նորոգեց,  
Երէկ շղթայուած՝ այսօր ինքնավար,  
Յարեալ վեհօրէն դամբանէն խաւար:

Հսկայ նուիրման  
Տորմիդ հըրաթեւ  
Կամաւոր բանակ,  
Մ<sup>3</sup>է<sup>3</sup>Շ Յառաջ անսասան,  
Յառաջ անդեղեւ,  
Դեպի յաղթանակ:

Երաժշտութիւնը՝ Բարսեղ Կանաչեան  
Երգ՝ Գեւորգ Գարւարենց

### **Յառաջ Ով Արի**

Յառաջ ով արի, հայ վսեմ ցեղի,  
Յառաջ կարօտով հայրենի հողի,  
Միտքդ միշտ արթուն, կամքդ կորովի,  
Սիրտդ յորդ աղբիւր սիրոյ կորովի:

Դեմքիդ ծիծաղ, աչքիդ լոյս,  
Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր.  
Հայ արի հոգիդ ցոյց տո՛ւր,  
Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր:

Տիպար կենցաղով եղիր դու կերտող,  
Պատիւ հայութեան դա՛նէ՛ զարդ կոթող.  
Քեզնով պարծենայ ցեղը Վարդանի  
Իբրեւ հայ ազգի վկայ կենդանի:

### **Հայաստան**

Վերադարձիր մայրիկ իմ հայրենիք  
Լսիր իմ կանչը կարօտ եմ քեզի  
Ես ապրել եմ քեզ արդէն շատ տարի  
Վերադարձիր իմ սիրելի մայրիկ:

Հայաստան, տես իմ արցունքները Հայաստան,  
Լացում եմ չեմ կարող քեզ մօտ գալ, չեմ կարող  
Հայաստան, մօտիկ եմ բայց չեմ կարող քեզ հետ  
Ես միանալ, միանալ, միանալ:

Ինչքան կարող է մարդ հանգիստ լինել,  
Ինչքան կարող է սրտում ցաւ պահել,

Եւ մենք ուզում ենք որ գոնէ այսօր  
Մեր մայրիկի հետ ապրենք սիրելով:

Հայաստան, տես իմ արցունքները Հայաստան,  
Լացում եմ չեմ կարող քեզ մօտ գալ, չեմ կարող  
Հայաստան, մօտիկ եմ բայց չեմ կարող քեզ հետ  
Ես միանալ, միանալ, միանալ:

Լսիր ինձ իմ քոյրեր եւ եղբայրներ  
Հիմա մեզ հետ են բոլոր մեր հայեր  
Ճանապարհից յետ չենք դառնայ երբէք  
Պէտք է յաղթենք, պէտք է հայեր լինենք:

Երաժշտութիւն եւ երգ՝ Լազարէ Տէր Գրիգորեան

### **Հերոսների Կենացը**

Հայաստանի ծով գինին  
Ձեր կենացը թող լինի  
Բացւեց կեանքը մեր ազատ  
Հայրենիքում հարազատ:

Բարձրացնենք բաժակները  
հերոսների կենացը,  
Երկար լինի մեր այս կեանքը  
անուշ մնայ մեր հացը,  
Վիշտ չտեսնի ոչ մի մարդ  
Մեր մայրերի աչերում,  
Այսպէս խաղաղ ուրախ կեանքը  
միշտ էլ լինի աշխարհում:

Խաղաղութիւն սիրողը  
Թող պաշտպանի մեր հողը,  
Ողջ աշխարհին մեզ երգում  
Խաղաղութիւն է ուզում:

Բարձրացնենք բաժակները...

### **Հերոսների Երգը**

Մայր ծնողի պէս ես նայում Արարատիցը,

Հայաստանի հողին մեռնեմ, սրտի խորքիցը:

Բաժակները եկեք խմենք կենացն Հայերին,  
Անդրանիկին, Սերոբ փաշին, Հայկ Բժշկեանցին:

Այն Հայր որ ազգն ուրանայ եւ այլազգ դառնայ,  
Մահուան օրը հայ արցունքին նա չարժանանայ:

Բաժակները եկեք...

### **Հովիւր Սարում Տխրեց**

Հովիւր սարում տխրեց,  
Միրոյ երգը նուագեց  
Երգը վառ աչերին, երգը վարդ այտերին,  
Երգը զուարթ օրերին...

Հէ՛յ, խեղճ հովիւ, քեզ բաժին՝  
Խոր ձորում մնացիր, հինկա՛ լլա...  
Երգը վառ աչերիդ, երգը վարդ այտերիդ,  
Երգը զուարթ օրերիդ...

Ահա կու գայ նոր գարուն,  
Ծաղիկներով զարդարուն  
Պոյն-գոյն ծաղիկներ՝ Սիրուն են, հա՛, հա՛, հա՛,  
Գոյն-գոյն ծաղիկներ՝...

### **Հոյ, Նազան Իմ**

Հոյ նազան իմ, նազան իմ,  
Ջան նազան իմ, նազան իմ,

Նազան դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Խոր-խոր ձորերով եկար:

Գարնան սիրուն ծաղիկ ես,  
Հոյ նազան իմ, նազան իմ,  
Ինձ համար աղունիկ ես,  
Ջան նազան իմ, նազան իմ,  
Նախշուն թեւ թիթեռնիկ ես,

Ջան նազան իմ, նազան իմ,

Եար ջան, դու բարով եկար  
Կանաչ սարերով եկար,  
Խոր-խոր ձորերով եկար:

### **Հրաժեշտի Երգը**

Արդեօք պետք է որ բաժանունք  
Մեկնենք անվերադարձ,  
Արդեօք պետք է որ հեռանանք  
Ու իրար մոռանանք:

Միայն ցտեսութիւն եղբայր  
Միայն ցտեսութիւն,  
Դարձեալ իրար կը հանդիպենք  
Ու կ'երգենք միաձայն:

Կազմենք մի շղթայ աննկուն  
Մեր կուռ բազուկներով,  
Սիրոյ մի շղթայ զօրաւոր  
Անկեղծ ու անարատ:

Միայն ցտեսութիւն...

Զի Տէրը որ մեզ կը դիտէ  
Երկնքի կապոյտէն  
Տէրը որ մեզ կը սիրէ ու  
Իրար կը միացնէ:

Միայն ցտեսութիւն...

### **Հայ Արեւոյշ**

Հայ արեւոյշ, ազնիւ բարի  
Դու միշտ պատրաստ օգնութեան  
Քեզ է նայում ողջ հայութիւն,  
Մեծ, պատանի, երեխայ:

Հայ արեւոյշ, զգաստ ու ժիր  
Կուրծքդ տուր ամէն փորձանքի

Որ ազգութիւն խաղաղ ապրի  
Հայն էլ ազատ իր երկրում:

### **Հայ Ֆիդայիք**

Մուշն ու Սասուն հայոց պարծանք, ոտքի կանգնեցին,  
Անթիւ զոհերի գնով ազգը փրկեցին.  
Անմնացորդ իրենց կեանքը ազգին նուիրած,  
Քաջ Անդրանիկ, Գեորգ Չաւուշ միշտ յառաջ ընկած:

Հայ ֆիդայիք ջան ֆիդայիք  
Մենք ձեզի մեռնինք,  
Դուք էք փրկիչ մեր հայ ազգի,  
Ձեր յոյսով կապրինք:

Մեր սուրբ վանքը պաշարուած է բազում զօրքերով,  
Նրա մէջ են ֆիդայիներ քառսուն որբերով.  
Անդրանիկը հրաման տուեց “մենք ձեզի դուրբան,  
Կոտորենք անգութ թշնամուն, թող մեզնից դողան”:

Հայ ֆիդայիք...

Քաջ ֆիդայիներ միասին տուին համազարկ  
Կոտորուեցին շուն ասքիարներ, հետերն էլ օսման.  
Կէս գիշերին վանքից ելան, պատռեցին շղթան,  
Քաջ Անդրանիկ, Գեորգ Չաւուշ ձեր հոգուն դուրբան:

Հայ ֆիդայիք...

### **Հայ Քաջեր**

Սասնայ քաջեր վերցրին զենքեր,  
Մահն աչքերնուն դէմն առան.  
Հայոց ազգի կոյս աղջիկներ  
Ասքիարներ բռնի տարան:

Հայ քաջեր, Հայ քաջեր, ժամն է մեր օրհասական,  
Հայ կամաւորների խմբով պիտ ազատենք Հայաստան:

Իւր քաջերով էր բիրաւոր,  
Տարօն աշխարհի սարեր



Մշոյ դաշտէն մինչեւ Սասուն  
Քաջ Արաբօն կը հսկէր:

Հայ քաջեր, Հայ քաջեր, ժամն է մեր օրհասական,  
Արաբօի շիրմով երդուինք պիտ' ազատենք Հայաստան:

Ֆիտայապետ Գեորգ Չաւուշ  
Իւր քաջերով անսասան,  
Իւր կատարած սխրանքներով  
Կոչուեց սարերի ասլան:

Հայ քաջեր, Հայ քաջեր, ժամն է մեր օրհասական,  
Մեր եռագոյն դրօշի ներքոյ պիտ' ազատենք Հայաստան:

Սերոբ Չրբիւր Նեմրութ սարում  
Երդուիլ տուեց քաջերուն  
“Հայրենիքի սիրոյն համար  
Կամ մահ, կամ ազատութիւն”:

Հայ քաջեր...

### **Հայորդիք**

Հայորդիք որ կ'ապրիք դուք հեռուն,  
Մի մոռնաք մեր անուշ մայր լեզուն,  
Երգեցէք եւ միշտ խօսեցէք,  
Կը տեսնէք թէ ինչքան է անուշ:

Մենք քիչ ենք բայց կը մնանք միշտ հայ,  
Չենք մոռնար մեր մայրենի լեզուն,  
Մենք անվերջ միշտ ձեռք ձեռքի տալով,  
Մեր ազգը միշտ բարձր պահելով,  
Բարձր ենք, միշտ բարձր մենք մնա՛նք  
Չը՛ լուծուինք իրար սիրենք,  
Մեր սուրբ պատիւը բարձր պահենք:

Հայորդիք որ կ'ապրիք դուք հեռուն,  
Մի մոռնաք մեր հայոց պատմութիւն,  
Պատմեցէք ձեր զաւակներուն,  
Որ գիտնան արժէքը հայերուն:

Մենք քիչ ենք բայց...

### **Այս Ձով Այգին**

Այս զով այգին դաշտը ծաղկուն,  
Անտառները գաղեցիկ,  
Յորդ գետերի երգը զնգուն,  
Դու ես տուել հայրենիք:

Դու մեր տունն ես նւիրական,  
Դու մայրիկի պէս բարի,  
Թանկ քեզանից ոչինչ չկա,  
Մեր հայրենիք սիրելի:

Ուրախ խաղեր, ծիծաղ ու երգ,  
Աշխատանք, դասեր ու գիրք,  
Ինչքան անգին գանձեր ունենք,  
Դու ես տուել հայրենիք:

Դու մեր տունն ես...

### **Ճանապարհ**

Մենք գնում ենք ճամբորդութիւն,  
Ճանապարհին տեսնենք բնութիւն,  
Այս հողերից, դաշտ ու ձորերից  
Մեր ապագան կը յիշենք նորից,

Ճանապարհ մեզի տար,  
Դաշտ ու սար,  
Շատ հեռու  
Մեր քաղաքից, այն վատ օդից,  
Ճանապարհ, մեզի տար...

Մենք անցնում ենք քաղաքներից,  
Հաճոյք տանում այն լաւ օրերից,  
Հայ սկառուտ հոգին բարի,  
Մեզ համար երգի, մի քիչ էլ պարի,

Ճանապարհ...

Մենք գնում ենք տարբեր տեսարան նայելու,  
Գնում միայն հաճոյք տանելու  
Մենք գնում ենք ու անցնում ենք  
Մեր քաղաքից շատ հեռու, շատ հեռու

Ճանապարհ...

Երաժշտութիւն եւ երգ՝ Սամվել Քուրչեան

### **Քեռիի Երգը**

Չորրորդ գնդի հրամանատար քաջ Քեռի,  
Ինքդ արի եւ գործերդ միշտ բարի,  
Սրտաճմլիկ լուրդ առինք ցաւալի,  
Քաջաց քաջն հերոս Քեռի պանծալի:

Անգութ մահը քեզ մեզանից բաժանեց,  
Մեր սրտերում անբուժելի վերք բացեց,  
Մի թէ չար գնդակը քեզի որոնեց,  
Գաղափարդ եւ յոյսերդ խորտակեց:

Թող լռեն սոխակներ է՛լ չճլուրլան,  
Սլացէ՛ք կռունկներ դէպի Հայաստան,  
Լուր տարածեցէք դուք համայն հայութեան,  
Հայոց պաշտպան Քեռին մտաւ գերեզման:

Դու ամէն տեղ վազում էիր օգնութեան,  
Քեզ ազդում չէր ո՛չ սուր, ո՛չ թուր, ո՛չ գնդակ,  
Ամէնքին անխտիր էիր դու պաշտպան,  
Կոչմանդ արժանի հերոս Քեռի խան:

Մահդ Դաշնակցութեան մեծ ցաւ պատճառեց,  
Եւ ընտանիքիդ էլ սիրտը խռովեց,  
Համարեա թէ ամբողջ Կովկասը ցնցուեց,  
Քեզ համար շատ մայրեր լացին ողբացին:

Ռուանդուզի կռիւն էր շատ ահաւոր,  
Թշնամու զօրքերն էին բիրաւոր,  
Տասնըինը տասնըվեց Մայիս տասնըհինգին,  
Հայոց առիժն ինկաւ վրէժը կրծքին:

## **Խանի Երգը**

Ագուլիսցի քաջ պատանի,  
Մահուանդ լուրը ով թող տանի,  
Քեզ պէսներուն միշտ երանի,  
Դուք էք յոյսը Հայաստանի:

Խունկով մոմով գամ Խանասոր,  
Արցունք թափեմ ես ամէն օր,  
Քեզ հարցնելով մնացի մոլոր,  
Նստած կու լամ ես ամէն օր:

Յուլիս ամսուն քսանհինգին,  
Մոսին հրացան պատրաստ ձեռին,  
Թուրքին ոխը պահած սրտին,  
Դէպ՝ Խանասոր դիմեց ուժգին:

Արտասուքս հեղեղ դարձաւ,  
Պայծառ օրս խաւարեցաւ,  
Լեռներ, ձորեր արին լացաւ,  
Խանի պես քաջը գոհեցաւ:

Սուրս առնեմ ելլեմ յառաջ,  
Թուրքեր ջարդեմ ես ձախ ու աջ,  
Ես ալ հայ եմ պարտաճանաչ,  
Ազգիս համար մեռնիմ ես քաջ:

## **Խարոյկի Երգը**

Եկէք այսօր խանդավառ  
Պարենք խարոյկի շուրջը,  
Այս խարոյկը բոցավառ,  
Մեր հոգու երգն հրավառ:

Չի հանգցնի ոչ մի հողմ  
Մեր հոգու երգը հօր,  
Նա դարերից է եկել  
Եւ մեզ աւանդ մնացել:

## **Խուժան Ասկեար**



Արեւելքէն մինչեւ արեւմուտք, հիւսիսէն հարաւ  
Եկանք բոլորս այս վայրին մէջ ճանչնալու իրար,  
Ճանչնալու իրար ու եղբայրանալ:

Ճամպորին ճամպորին մեզ առիթ՝  
Ճամպորին ճամպորին ըլլայ  
Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտներ,  
Մնալու միշտ եղբայր:

Ամուր պահենք միշտ մեր կապերը աշխարհի վրայ  
Գուրգուրալով մեր սիրուն լեզուին ու խոստանալով  
Խոստանալ միշտ հայ մնալ ու եղբայրանալ:

Ճամպորին ճամպորին մեզ առիթ՝  
Ճամպորին ճամպորին ըլլայ  
Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտներ,  
Մնալու միշտ եղբայր:

### **Լիզպոն Հինգի Յիշատակին**

Ահա այսպէս արշաւեցիք,  
Լիզպոն զոհուած լաւ ընկերներ  
Որ աքթովը կը կոչուիք,  
Դրոյի ժառանգ վեհ խենթեր:

Այս կռուի փայլուն ասպետներ,  
Ռոստոմեան լոյսի մարտիկներ,  
Յանուն ազգի ազատութեան,  
Պայթեցուցիք սուրբ հինգ սրտեր:

Ի՞նչ սփոփանք անգորներուն,  
Մխիթարանք հայ խղճերուն,  
Կան զոհերուն նոր անդունդէն,  
Պայծառացող տիպարը ձեր:

Դեմքերը ձեր կ'ազնուանան,  
Կը տանճեն սրտեր անպայման,  
Բայց միշտ ծանր է մեր սրտերուն,  
Յուշն է Եռագոյն ձեր կամքերուն:

Ով մահուան յաղթող Դումաններ,  
Երկաթ սրտով նոր Չաուշներ,  
Կ երդուենք անբիծ պատուովը ձեր,  
Ընդարձակել պայքարը մեր:

### **Մարտիկի Երգ “Կարօտ”**

Թռչէի մտքով տուն, ուր իմ մայրն է արթուն,  
Տեսնէի այն առուն, կարօտով ես անհուն,  
Որ ամ»ն մի գարուն, ջրերով վաճարուն,  
Կարկաչում է սարերում:

Թեքուէի աղբիւրին, կարօտած պաղ ջրին,  
Լինէի հանդերում, մեր կանաչ մարգերում,  
Ուր ծաղկունք են բուրում,  
Ուր մանուկ օրերում, հողն էր ինձ միշտ համբուրում:

Հայրենիք իմ սրտում, թէ չընկնեմ ես մարտում,  
Ախ իմ մա յր թանկագին,  
Տուն կը գամ ես կրկին, կը սփոփեմ քո հոգին,  
Համբոյրով սրտագին կը սեղմեմ քեզ իմ կրծքին:

Ախ իմ մայր, ախ իմ մայր...

### **Մասիս**

Արեւը քո մէջն է հանգում,  
Բայց քեզ նայելով մենք չենք կշտանում,  
Դարեր առաջ բնութիւնից սարքւել,  
Այսքան դար է մեզ համար ես ապրել:

Նայի, նայի Մասիս քեզ ենք նայում,  
Մենք քեզ դեռ սաղ ենք երեւակայում:

Հիմի որ քեզի ենք նայում,  
Մեր աչքերից արցունքն է իջնում,  
Մեր պապերը որ քեզ համար կուել,  
Եւ բոլորը քեզ համար են զոհուել:

Նայի, նայի...

Հիմի որ քեզի ենք նայում,  
Քո սիրունութիւնը նոր ենք հասկանում,  
Մեր պապերը որ քեզ համար են կուել,  
Իմացել են ինչ արժէք ես ունեցել:

Նայի, նայի...

### **Միութեան Երգը**

Երբ այստեղ մենք խումբ կազմած,  
Մարմին ու միտք ենք մարզում,  
Օգնութեան ձեռքը պարզած,  
Նոր սերունդ ենք պատրաստում:

Օտար գաղութների մէջ,  
Հայ Դատին ենք ծառայում,  
Ու մենք հպարտ ենք որ մեզ,  
Հայ սկաուտ ենք կոչում:

Արի, արի, հայ քաջ արի,  
Արի, արենոյշ,  
Արի գայլիկ, քնքոյշ աղջիկ,  
Աստղ ես արծուիկ:

Բայց նա ներեց, ու նուիրեց,  
Մեզ պատիւ բերեց,  
Փոքրը նայեց քեզի երեց,  
Քեզնից սովորեց:

Երաժշտութիւն եւ երգ՝ Արմէն Զարգարեան, Ռոբերտ Օհանեան եւ Արիկ  
Գեւորգեան

### **Մենք Անկեղծ Չինուոր Ենք**

Մենք անկեղծ զինուոր ենք, առանցի վիճակ,  
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ.  
Պարսկաստանի խորքից եկել է նամակ,  
Գնում ենք բարով, կուշանանք տարով,  
Արիւն, սուր ու հուր, պատերազմի դաշտ կը սպասեն մեզի:

Դուշմանը մեզ տուեց “Զան ՖՇտա” անուն,



Այդ անուան համաձայն տեսաւ զօրութիւն.  
Մենք չենք ուզ»՛՛Է ազատ կամքի բռնութիւն,  
Ուխտել ենք կռուիլ, այդ սիրով մեռնիլ,  
Համոզուած ենք, որ միայն զէնքով կայ հայոց փրկութիւն:

Իստամպուլը պիտի լինի արեան ծով,  
Ամեն կողմից կռիւ կը սկսի շուտով.  
Կոտորենք Բաշկալա անցնենք հեշտ կերպով,  
Աջից Վարդանը, ձախից Իշխանը,  
Գրաւենք Աղբակ, տարածենք սարսափ, փա՛ռք Դաշնակցութեան:

Բաշկալա գաւառում, այն պատերազմին,  
Աւելի մեծ սարսափ տիրեց սուլաթանին.  
Քաջ Ջէթունը յաղթեց վատ չար գազանին,  
Կեցցէ՛ Ջէթունը, խրոխտ Սասունը,  
Դաշնակցութիւնը, բախտաւոր օրեր պարգեւեց հային:

### **Մեր Հայրենիք**

Մեր Հայրենիք, ազատ անկախ  
Որ ապրել ես դարէ դար  
Իւր որդիքը արդ կանչում են  
Ազատ անկախ Հայաստան:

Ահա՛ եղբայր քեզ մի դրօշ,  
Որ իմ ձեռքով գործեցի,  
Գիշերները ես քուն չեղայ,  
Արտասուքով լւացի:

Նայիր նրան երեք գոյնով,  
Նւիրական մեր նշան,  
Թող փողփողի թշնամու դէմ,  
Թող միշտ պանծայ Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ պիտ՛ մեռնի,  
Բայց երանի որ իւր ազգի  
Ազատութեան կը զոհի:

### **Մհերի Յիշատակին**

Խաղաղ կեանքը փուշ թուեցաւ Մհերին,  
Թողած տուն ու տեղ, գնաց երկիր հայրենի,  
Ո՛չ ընտանիք, ո՛չ հարազատ սիրելի,  
Աչքն էր յառած միայն անտէր Արցախին,

Սասնայ գաւակ՝ Մհեր սուրաց Մարտունի,  
Ուր ապրելու լոկ հայն իրաւունք ունի,  
Առիծ Մհեր Մարաթուկէն կը կանչէր  
“Հասիր որդի, իմ շառաւիղ քաջ Մհեր”:

Դուն մերժեցիր փառքն ու վայելքն աշխարհի,  
Գացիր այնտեղ, ուր ո՛չ ծափ կար, ո՛չ ոսկի,  
Կորսուած հողին, դատին պաշտպան ֆետայի,  
Կեանքդ կանաչ մատաղ տուիր Արցախին:

Մհեր անվախ, Սասնայ որդի ջան Ֆետա  
Քեզի համար երբե՛ք, երբե՛ք մահ չկայ,  
Դուն կը մնաս երիտասարդ ու արի,  
Յուշդ բարի մեզ հեզ յաւէտ պիտ ապրի:

### **Մովսէս Գորգիսեանի Յիշատակին**

Երասխաւանը դարձաւ նոր Սուլուխ,  
Պայթեց նոր գնդակ ինչպէս հրաբուխ,  
Դեռ չբոլորած քսանութ տարին,  
Դաժան գնդակը գտաւ հայ քաջին:

Դե՛հ, ոտքի ելէ՛ք, ով հայոց քաջեր,  
Ասկեար չպղծէ մեր սուրբ խաչքարեր,  
Թող ցեղերն այդ բիրտ ու թափառական,  
Սարսափով թողնեն հողը հայկական:

Բազում հայ քաջեր հոգու ուժ առան,  
Վեհ գաղափարի մարտիկներ դարձան,  
Եռագոյնը մեր դեռ կը հասնի Վան,  
Որ նորից թնդայ Անկախ Հայաստան:

Դե՛հ, ոտքի ելէ՛ք...

Ծիծեռնակաբերդ մեր սուրբ բարձունքում,  
Շատ քաջերի պէս նա էլ է հանգչում,

Այդ ինչպէս ընկար եւ ում գնդակից,  
Վեր կաց, ո՛վ Մովսէս, վեր կաց խոր քնից:

Դե՛հ, ոտքի ելէ՛ք...

### **Օտարութիւն**

Օտարութիւն այսքան տարով,  
Կուլամ կարօտով, կարօտով.  
Մեր խնդիր պիտ լուծուի շուտով,  
Համբերէ հոգիս, համբերէ:

Հեռացել եմ հայրենիքէս,  
Բաժանուել եմ ընտանիքէս.  
Անշուշտ օր մը պիտ միանանք,  
Համբերէ հոգիս, համբերէ:

Սրտիս մէջը կայ մի կրակ,  
Կայրէ սիրտս ամ»ն ժամանակ,  
Հայրենիքէս չկար նամակ,  
Համբերէ հոգիս, համբերէ:

Մայրիկ կէրդօ»մ արեւ վկայ  
Յետայսու ինձ դադար չկայ.  
Արար աշխարհն թող իմանայ,  
Հայր կ'ապրի ու կը մնայ:  
Վատ չար թուրքը թող իմանայ,  
Դաշնակցութիւն կայ կը մնայ...

### **Ուրմիէի Վայրերում**

Ուրմիէի Վայրերում, հայր ու տղայ գնում ին,  
Գնում ին ու խօսում ին, ոչ ոգու հետ գործ չունին:

Վերջապէս հասան քաղաք, հասան քաղքի մեջտեղրանք,  
Լուր եկաւ որ մնացէք, քաղքից դուրս մի գնացէք:

Բայց հայրը ունէր գանգատ, իրեն ասին դու խենթ մարդ,  
Տունդ կանես քար ու քանդ, մնայ քաղքում դու հանդարտ:

Բայց հայրը չհամոզուեց, ինքը կառքի մէջ նստեց,

Տղի ձենոքին հաց տւեց, դէպի գիւղ ճանապարհւեց:

Նրանք գնում էին առաջ, գնում էին շատ լարուած,  
Երբ մի ուժգին ձայն յանկարծ, հաց ու տղին փռաւ ցած:  
Այ դու շուն թուրք անաստուած...

Այդ ձայնը մէկ գնդակ էր, տղի կուրծքը արիւն էր,  
Աչքերը նայում էր վեր, մահը տղին դարձաւ տէր:

Հայրը կառքից ցած իջաւ, տղի վիճակը տեսաւ,  
Տեսնելով նա լաց եղաւ, շուն թուրքին ուշունց տուաւ:

Էլ չգիտեմ ինչ եղաւ, թէ հայրը ինչպէս մեռաւ,  
Գիտեմ որ ոսկորները, դժարութիւնով ճարուաւ:

Լուր բերան տան տիկինին, որ սպանան քո տղին,  
Ասան քոյր եւ եղբայրին, որ մեռցրան ձեր հայրին:

Տան շունն էլ այնտեղ էր, դռան մօտը նստել էր  
Աչքերը թաց լցւել էր, տիրոջ ձեռաց տւել էր

Քառասուն վեց տարիա, որ այս դժպքից անցելա,  
Կանգնել եմ ու նայում եմ, այս գերեզմանի վրայ:

Հայրը տունից հեռացաւ, իսեղճ ու անմեղ մահացաւ,  
Տղէն ջահել երիտասարդ, կեանքի համը չիմացաւ:

Հայրը իմ մեծ պապն էր, տղէն իմ հօրեղբայրն էր,  
Երբէք իրենց չեմ տեսել, բայց միշտ ունեմ նրանց հետ:

## Ով Հայ Արի

Ով հայ արի նախ բարձրացիր,  
Մարմնով մտքով հսկայ դարձիր,  
Ջանք, ճիգ թափե դու ամէն օր,  
Գործադրելու բարիք մը նոր:

Հնազանդէ մեծերուդ միշտ,  
Մի պատճառէ ոչ ոքի վիշտ  
Ազգիդ համար միշտ աշխատէ,  
Եղիր առոյգ եւ ճիշտ դատէ:

## Սարդարապատ

Երբ չի մնում ելք ու ճար,  
Խենթերն են գտնում հնար:  
Այսպես ծագեց արեգակեց  
Սարդարապատի մարտը մեծ:

Զանգե՛ր, դողանջեք,  
Սրբազան քաջերին կանչեք  
Այս արդար պատից:  
Սերունդնե՛ր դուք ձեզ ճանաչեք  
Սարդարապատից:

Աւարայրից ջանք առանք,  
Այստեղ մի պահ կանգ առանք ,  
Որ շունչ առած՝ շունչներս տանք  
Սարդարապատի պատի տակ:

Զանգե՛ր, դողանջեք...

Բայց մենք չընկանք, մենք միշտ կանք.  
Մենք չհանգանք՝ դեռ կը գանք  
Երբ տան գանգը, ահագանգը,  
Որ մեր հոգու պարտքը տանք:

Զանգե՛ր, դողանջեք...

## Մկառուներ

Գայլիկներ մեծ կանչի մեջ  
Աքելային կը բարեւեն  
Իրենց խոստումը յիշելով  
Լաւագոյնը ձգտելով:

Արծիկը ժպտուն դէմքով  
Միշտ ուրախ իր երգերով  
Ան կը ջանայ լաւագոյնին  
Միշտ ըլլալով միասին:

Արենուշը միշտ պատրաստ է

Իր ազգութեամբ միշտ հպարտ է  
Նւիրական ու միշտ օգնող  
Հայ Դատը միշտ պաշտպանող:

Քաջ Արիներ մենք կի կոչւինք  
Խմբապետին կը հետ»ւինք  
Կը ծառայենք մեր հայ ազգին  
Միշտ հպարտ ենք Արցախին:

Հ.Մ.Ը.Մ.-ի զաւակներ  
Ապագայի հայ զինուորներ  
Բարձրագոյնին միշտ ձգտելով  
Կը զօրանանք մեր կամքով:

### **Մերոքի Եւ Սօւէի Երգը**

Գնդակ որոտաց Նոյեմբեր ամսուն,  
Պաշարւած ենք մենք իմ սիրուն Սօւէ,  
Վեր առ մոսինը, քաջութիւն հոս է,  
Քու սիրած Մերոքին օրհնեալ օրն այս է:

Ձայն տուա Սօւէն, Մերոք ջան հոս եմ,  
Զինւած պատրաստուած ձայնիդ կը սպասեմ:  
Քեզի հետ կուելու, քո կողքին մեռնելու,  
Ամ»ն օր, ամ»ն ժամ պատրաստ է Սօւէն:

Իսկ քո Մերոքը, կեանքիդ հատորը,  
Արինով ներկեց Տալուրիկ ձորը,  
Առիծի նայւածքով նայում էր բոլորը,  
Քաջաբար կուելով այդ ամբողջ օրը:

Ձայն տուր Անդրանիկ, կենսատու ընկեր,  
Արդեօք այս պահուն որ լեռն ես պառկեր,  
Ոսկեթել մազերով երեսդ ծածկել,  
Յաղթական բազուկովդ մոսիդ ես գրկել:

Հասիր Անդրանիկ, հասիր օգնութեան,  
Մերոք կը գոհի ի սէր ազգութեան,  
Դէհ, հասիր շուտ հասիր կտրիճ խումբերով,  
Մերոք կը գոհի իր զաւակներով:

## **Մերոք Փաշայի Երգը**

Ով որ քաջ է ինչ կը սպասէ,  
Արդէն ժամանակն է թող գայ,  
Մահ-պատերազմի օրհաս է,  
Ով որ անվախ, քաջ է թող գայ:

Կամ կուելով մեռնինք անցնինք,  
Կամ զենքով փրկութիւն ստանանք,  
Կուելով փրկենք հայրենիք,  
Ազնիւ մտածողը թող գայ:

Այս հինգ դար է մեզ կը սպանեն,  
Բռնի կրօնքէ մեզ կը հանեն,  
Մեր կին աղջիկներ կը տանեն,  
Պատիւ ունեցողը թող գայ:

Վերջապէս մենք ունինք կռիւ,  
Զենքով պիտի մաքրենք Մ»ն հաշիւ.  
Մեր հայրենեաց փառքն ու պատիւ,  
Մերոք ծաշան սիրողը թող գայ:

## **Շահէն Մեղրեանի Յիշատակին**

Արցախ գաւառում կռուի ձորերում,  
Հայդուկն էր ընկել խոր վերքը կրծքին,  
Բացուած վերքիցը արիւն էր ծորում,  
Զեռքն էր երկարել իր հրացանին...

Այդ քաջ հերոսն էր Շահէն Մեղրեան,  
Երդուեալ զինուոր սուրբ Դաշնակցութեան.  
Սրբութեամբ պահեց հայկեան անունը,  
Թափեց իր վերջին կաթիլ արիւնը:

Արիւնոտ դաշտում պլպուլն էր երգում,  
Հայդուկն էր ընկել մահուան խոր քնով,  
Նա իր հոգու մէջ երազ էր տեսնում  
Հայրենի աշխարհ ազատ ապահով...

Այդ Քաջ Հերոսն Էր...

Ախ թէ լինէի կայծակ, հրաբուխ,  
Մռով լեռների ճակտիցը վիժած,  
Պիտի շանթէի, պիտի փշրէի,  
Թշնամեաց գնդեր արինանախանձ:

Ջոհուեցաւ կռոււմ Շահէն Մեղրեան,  
Մռովի լանջի անվեհեր հսկան,  
Սրբութեամբ պահեց հայկեան անունը,  
Թափեց իր վերջին կաթիլ արիւնը:

### **Թաթուլ Կրպէեան**

Մի ասուպ սահեց անցաւ երկնակամարով,  
Հաւքեր եկան անցան լուռ արտասուելով,  
Աւա՛ղ, Թաթուլն էր ընկել կռոււմ քաջարի.  
Մի լուր տարէք հաւքեր մօրը հայդուկին:

Ազգի սուրբ կարօտով կամաւոր դարձար,  
Վասն հայրենեաց դու նահատակուեցար,  
Աւա՛ղ, վերքերիդ համար չկար դեղ դարման,  
Թող լոյս իջնի շիրիմիդ Թաթուլ Կրպէեան:

Ազատութեան մարտիկ, ազգի քաջ զինուոր,  
Մահուանդ լուրը տարածուեց ամբողջ աշխարհում.  
Ձեր թափած արեան կանչը թող ապրի յաւերժ,  
Ամ»ն հայի սրտում թող ծնուի վրէժ:

### **Թիթեռ**

Թիթեռ թռիր դու սար ու քար,  
Գունաւորիք տերեւ եւ ծառ,  
Մի օր ունես դու ապրելու,  
Կ»անքի համը ճաշակելու,  
Թիթեռ թռիր դու սար ու քար,  
Իմ լաւ թիթեռ:

Պատմութիւնդ դարերով չէ,  
Հոգիդ անցեալով պղտոր չէ,  
Տեսնելու ես միայն մեկ օր,  
Եղած, չեղած կարելու չէ,  
Պատմութիւնդ դարերով չէ,



Միրուն թիթեռ:

Հոգսեր չունես դու անցեալից,  
Դու չես եկել ջարդ ու ցաւից,  
Տուն չես շինել ու քայքայել,  
Օտարի հաճոյքին չես փարւել:

Թոչիր թիթեռ, մի վհատւիր,  
Մի վախենայ, հեռուն նայիր,  
Լրիւ կեանքդ քանի ժամ է,  
Բախտաւոր ես, լաւ վայելիր:

Երաժշտութիւն եւ երգ՝ Արիկ Գեւորգեան

### **Վեհ Գաղափար Դաշնակցութեան**

Քեզի յարգանք ու մեծարանք  
Հերոս ազգի անհուն պարծանք,  
Դուն իմ իտեալ ազատութեան  
Վեհ գաղափար Դաշնակցութեան:

Երգեցի փառք քու վեհութեան,  
Երգեցի ուժ քու զօրութեան,  
Երգեցի սէր քու միութեան,  
Պիտի երգեմ քեզ յաւիտեան:

Նպատակդ անբիծ, մաքուր,  
Անդրդուելի վեհ ամրաքար,  
Խրախոյսն ես հայ քաջերուն  
Ու սարսափը՝ վատ թշնամուն:

Երգեցի փառք...

Մորթուած ազգի մեծ սփոփանք,  
Նոր սերունդին փայլուն պերճանք  
Դուն ռահվիրա անկախութեան  
Վեհ գաղափար Դաշնակցութեան:

Երգեցի փառք...

**Վերքերով Լի**

Վերքերով լի ջան ֆեդայի եմ,  
Թափառական տուն չունեմ,  
Եարիս փոխան զենքս եմ գրկել,  
Մի տեղ Հանգիստ քուն չունեմ:

Արնոտ երկիր սուզ ու շիան,  
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից,  
Տանջւած հայրենիքի սերը,  
Զվախեցրեց ինձ վտանգից:

Ես կոչւեցայ ջան ֆեդայի,  
Դարձայ զինուոր գաղափարի,  
Թող իմ թափած արեան շիթեր,  
Օրինակ դառնան հայ զինուորի:

Ահա հանգիստ հող Կը մտնեմ,  
Յոյսս դուք էք ընկերներ,  
Շարունակէք մեր սուրբ գործը,  
Դաշնակցութեան վեհ քաջեր:

### **Վիզէնի Յիշատակին**

Վիզէն զրահ մեր պայքարի,  
Հերոս, մարտիկ հայ Արցախի,  
Անսակարկ կեանքն ազգին համար,  
Հայրենիքի սիրոյն նուիրաբար:

Յիշատակդ Վիզէն մնայ յաւիտեան,  
Արցախեան լոյս, անշէջ, անմար,  
Սերունդներուն վեհ մեր հայութեան  
Դառնայ սուրբ նշխար հաղորդութեան:

Հայու բոցերէն վեր բարձրացար,  
Զէնքը ձեռիդ խոյացար հերոսաբար,  
Նուիրական արիւնովդ անմահական,  
Միացար փաղանգին ֆետայական:

Յիշատակդ Վիզէն...

### **Երդման Երգ**

Այսօր երբ կանգնած հեռուն ենք նայում,  
Անցեալի հոգով ապագան դիտում,  
Այլ երագով չենք մենք բաւարարում,  
Աշխատանք ու գործը մեզի է կանչում:

Սկառուներ ենք անկեղծ սրտով ու բարի,  
Ուխտել ենք ծառայել Հ.Մ.Ը.Մ.-ի  
Ժամը հասել է երդում առնելու,  
Հայ դատի կոչը փողահարելու:

Ուրեմն ապրիք դու սուրբ Միութիւն,  
Դու ես տուել մեզ կամք եւ քաջութիւն.  
Երդում եմ այստեղ կեանքովս անգամ,  
Պահպանեմ քեզի ու ողջ Հայութեան:

Երաժշտութիւն եւ երգ՝ Արիկ Գեւորգեան

### **Երեւան Էր»բունի**

Երեւան դարձած իմ Էր»բունի,  
Դու մեր նոր Դիւն, մեր նոր Անի,  
Մեր փոքրիկ հողի դու մեծ երագանք,  
Մեր դարէ կարօտ, մեր քարէ նագանք:

Երեւան դարձած իմ Էր»բունի,  
Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի,  
Քո Մասիս հօրով, քո Արաքս մօրով,  
Մեծանաս դարով, Երեւան:

Մենք արեան կանչեր ունենք մեր սրտում,  
Անկատար տենչեր ունենք դեռ շատ:  
Մեր կանչն առանց քեզ՝ ի գուր կը կորչի,  
Առանց քեզ մեր տաք տենչն էլ կը սառչի:

Երեւան դարձած...

Կեանքում ամէն սէր լինում է տարբեր,  
Իսկ մենք բոլորս ենք քեզնով հարբել,  
Տաք է սերը մեր՝ շէկ քարերիդ պէս,  
Հին է սերը մեր՝ ձիգ դարերիդ պէս:

Երեւան դարձած...

## Երգ Արիներին

Արիներ՝

Մեզի համար դուք էիք աշխարհի միակ յոյսը.  
Ձեզ կ'երգէինք անդադար, որ լինէիք մեզի եար:

Հասակդ բարձր թզուկի պէս,  
Ձայնդ անուշ ագռաւի պէս,  
Լեզուդ քաղցր բիրբարի պէս,  
Դէմքդ փայլուն ածուխի պէս:

Իսկ Արեւուշները՝

Հասակդ բարձր չինարի պէս,  
Ձայնդ անուշ սոխակի պէս,  
Լեզուդ քաղցր շաքարի պէս,  
Դէմքդ փայլուն արեւի պէս:

## Եօթերորդ Հանդիպում

Վերստին անգամ անցաւ չորս տարի,  
Եւ մեզ վիճակուեց հանդիպել կրկին,  
Հանդիպել կրկին մեր հայրենիքում  
Ու վայելելու 7-րդ բանակում:

Նոր նոր ընկերներ սպասում են մեզ,  
Անակնկալներ շատ ու հաճելի,  
Հ.Մ.Ը.Մ-ի արի արեւոյշներ  
Այցելելու են տեսարժան վայրեր:

Եթէ որ հասնի բաժանման պահը,  
Կ'երգենք բարձրաձայն հրաժեշտի երգը,  
Ուր էլ որ լինենք, ուր էլ որ գնանք,  
Իրար հետ մենք միշտ կապի մեջ մնանք:

Երաժշտութիւնը՝ Արիկ Գեւորգեան  
Երգ՝ Նորայր Թահմազեան

## ԶԷԺՅՈՒՆԳԻՆԵՐ

Արեւն ելաւ ԶԷԺՅՈՒՆԳԻՆԵՐ,  
Դէհ, ձի հեծնենք առնենք զէնքեր,  
Դիմենք յառաջ,  
Ինչու, ինչու գլուխ ծռենք,  
Բռնաւորին մեր վիզ պարզած:

ԶԷԺՅՈՒՆԳԻ ԵՆՔ մեր սփոփանք,  
Են պատերազմ եւ արշաւանք,  
Սուր, թուր, գնդակ եւ հրացան,  
Են խաղալիք մեր յաւիտեան:

## ԶԻՆՈՐԻ ՄՕՐ ԵՐԳՐ

Զարթիր որդեակ, յուշ բեր, վեր կաց,  
Պատերազմի փողն հնչեց,  
Զարթիր կոչեց տէր հայրենեաց,  
Կենաց մահու ժամ հնչեց:

Պատրաստել եմ քո զէնքերը,  
Ահա գլխիդ վերել կան՝  
Ինչպէս երբեմն քո գրքերը՝  
Երբ կ'երթայիր վարժարան:

Ելիր կապեմ սուրը մէջքիդ,  
Ասպար կախեմ քո ուսէդ,  
Եւ սուրբ դրօշակ հայրենիքիդ,  
Թող ծածանի աջ թելէդ:

Փոխան գրքիդ ահա սուսեր,  
Փոխան թղթի՝ կուի դաշտ.  
Գնա՛ մեռիր ազգիդ համար,  
Թող մայր երկիրդ ապրի հաշտ:

Քսան տարի կերակրեցի  
Մինչ հասակդ այդ առիւր.  
Այդ հասակիդ մայրդ մեռնի,  
Դուն ալ քու ազգիդ մեռիր:

Յառաջ որդեակ, Ի մարտ անմահ,

Տէք անվախ կուրծք, ճակատ,  
Հոգ չէ թէ քեզ կը գտնէ մահ,  
Զի յայնժամ է ազգն ազատ:

### **Ա Բում Չիքա Բում**

Ա բում չիքա բում  
Ա բում չիքա, ուաքա չիքա, ուաքա չիքա, բո՛ւ մ  
Ահա... Oh yeah  
One more time  
Let´s...

### **Բիա Բիա**

Բիա բիա բիա-էն  
Սիա սիա սիա-էն  
Բիա-էն Սիա-էն  
Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտները ձեզ կը բարեւեն...

### **Չէ Չէ Կուլէ**

Չէ չէ կուլէ  
Չէ քուֆիստա  
Քուֆիստա լանգա  
Լանգա թէ լանգա

Չումբ-ա լէ-լէ  
Լէ-լէ կուլէ  
Փաչանգա լանգա  
Ազել լէ լէ

Թա-ի եա ջեջէ՛

### **Չինկա Լոնկա**

Չինկա լոնկա, չինկա լոնկա հէ՛յ, հէ՛յ,  
Չինկա լոնկա, չինկա լոնկա հէ՛յ,  
Չինկա լոնկա, հա չո՛ւ չո՛ւ  
Չինկա լոնկա, հա չո՛ւ չո՛ւ  
Հա՛ չո՛ւ չո՛ւ, հա՛ չո՛ւ չո՛ւ  
Հա չո՛ւ չո՛ւ

## **Չուբլիքա**

Չուբլիքա, չուբլիքա, չում, չում, չում.  
Բուբլիքա, բուբլիքա, բում, բում, բում.  
Չուպլիքա, բուբլիքա,  
Ձիմ, բում, բա,  
Կեցցե՛, կեցցե՛, կեցցե՛.

## **Չում Չամ**

Չում չամ չում չամ կոլի կոլի կոլի  
Չում չամ չում չամ կոլի կոլի Է:  
Կոլի կոլի, կոլի կոլի, կոլի կոլի, կոլի կոլի,  
Կոլի կոլի, կոլի կոլի, կոլի Է...

## **Չըգալագա**

Չըգալագա, չըգալագա, չօ, չօ, չօ:  
Պումալագա, պումալագա, պօ, պօ, պօ:  
Չըգալագա, պումալագա, զիմ, պօմ, պա:  
Կեցցե՛, կեցցե՛, կեցցե՛:

## **Ֆի Ֆլայ Ֆլօ**

Ֆի ֆլայ ֆլօ  
քումալադա, քումալադա, քումալադա վիստա  
Օ-նօ, նօ, նօ նաթ դը վիստա  
ինի, մինի, դեսրլինի  
Ու-ա-ա մը լինի  
Աշ քաշ քումալադի  
Ու-ա-ա  
իշ քիթի օթն բօթն բիբօն  
Ը դիթն դաթն վաթն քաթն չշ:

## **Ա. Բ. Գ. Դ.**

Այբ, Բեն, Գիմ, Դա, Եչ, Ջա, ի՛  
Բարի եկած էք դուք բարի:

## **Խա Օի**

Խա՛ ծի՛ ըիքի՛ ըիքի՛ ուպլա՛ ուպլա, Է՛  
Խա՛ ծի՛ ըիքի՛ ըիքի՛ ուպլա՛ ուպլա, Ի՛  
Խա՛ ծի՛ ըիքի՛ ըիքի՛ ուպլա՛ ուպլաՆԵ՛ Բ՛  
Բարի Եկաք Սկսուտներ...

### **Լաւ Է, Բռավօ, Էքսթրա...**

Լա լա լա, վէ վէ վէ  
Լաւ է.

Բռա բռա բռա, վօ վօ վօ  
Բռավօ.

Էքս էքս էքս, թրա թրա թրա  
Էքսթրա.

### **Չում Թաք**

1,2,3,4

1,2,3,4

Չում թաք, զում թաք, զում թաք, թաք-թաք

Չում թաք, զում թաք, զում թաք, թաք-թաք

Հոյ, օէ, օէ

Հոյ, օէ, օէ